ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

ք. Երևան «18» հունիս 2026թ №1813-Ա

ՀՅՈՒՐԱՆՈՑԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Զբոսաշրջության մասին» օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 658-Լ որոշման հավելվածի 18-րդ կետի 21-րդ ենթակետով՝

Հ ր ա մ ա յ ու մ ե մ

1. Հաստատել հյուրանոցային տնտեսության օբյեկտների համապատասխանության մասնագիտական գնահատման ընթացակարգը՝ համաձայն հավելվածի:
2. Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության լրատվության և հասարակայնության հետ կապերի վարչությանը՝ 3-օրյա ժամկետում ապահովել սույն հրամանի տեղադրումը Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության պաշտոնական կայքէջում:

X

ԳԵՎՈՐԳ ՊԱՊՈՅԱՆ

Հավելված
ՀՀ էկոնոմիկայի նախարարի
2026 թվականի հունիսի 18-ի N1813-Ա հրաման

ԸՆԹԱՑԱԿԱՐԳ
ՀՅՈՒՐԱՆՈՑԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն հավելվածով սահմանվում է «Զբոսաշրջության մասին» օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված նվազագույն պահանջներին ու չափորոշիչներին, ինչպես նաև զբոսաշրջության զարգացման պետական քաղաքականության առաջնահերթություններին՝ հյուրանոցների և առողջարանների կառուցման կամ վերակառուցման ներդրումային նախագծերի համապատասխանության մասնագիտական գնահատման ընթացակարգը:
2. Սույն հավելվածում օգտագործվում են հետևյալ հասկացությունները՝
   1) Օրենք՝ «Զբոսաշրջության մասին» օրենք.
   2) Հյուրանոց՝ Օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հյուրանոցային տնտեսության օբյեկտ.
   3) Առողջարան՝ Օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված հյուրանոցային տնտեսության օբյեկտ.
   4) Ներդրումային նախագիծ՝ հյուրանոցի կամ առողջարանի կառուցման կամ վերակառուցման ծրագիր.
   5) Կոմիտե՝ Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտե.
   6) Հայտ՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի մարտի 26-ի N 355-Լ որոշման N 1 հավելվածի 6.1-ին կետով սահմանված հայտը՝ կից ներդրումային նախագծով և դրա գնահատման համար հիմք հանդիսացող փաստաթղթերով.
   7) Հայտատու՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի մարտի 26-ի N 355-Լ որոշման N 1 հավելվածի 6.1-ին կետով սահմանված ֆինանսական կազմակերպություն:

2. ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՆԱԽԱԳԾԻ ՀԱՄԱՐ ՊԱՀԱՆՋՆԵՐ

3. Ներդրումային նախագիծը պետք է իրականացվի և հյուրանոցը կամ առողջարանը պետք է կառուցվի կամ վերակառուցվի Հայաստանի Հանրապետության մարզերում (բացառությամբ Երևան քաղաքի):
4. Ներդրումային նախագիծը պետք է ներառի տեղեկատվություն կառուցվող կամ վերակառուցվող հյուրանոցային տնտեսության օբյեկտի (հյուրանոցի կամ առողջարանի) գործունեության՝ Օրենքի 12-րդ հոդվածի 1-ին կամ 4-րդ մասերին և Օրենքից բխող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերով սահմանված հյուրանոցային ծառայություններին և հյուրանոցային ծառայություն մատուցող անձանց վերաբերելի պահանջներին համապատասխանության մասին:
5. Ներդրումային նախագիծը պետք է ներառի տեղեկատվություն նախատեսվող ծառայությունների՝ հյուրանոցային ծառայությունների, այդ թվում՝ նվազագույն հյուրանոցային ծառայությունների մասին:

3. ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ

6. Հայտը սույն հավելվածով սահմանված պահանջներին համապատասխանելու դեպքում Կոմիտեն Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի մարտի 26-ի N 355-Լ որոշման N 1 հավելվածի 6.2-րդ կետով սահմանված ժամկետում տրամադրում է սույն հավելվածի ձևին համապատասխան եզրակացություն:
7. Հայտատուի ներկայացրած հայտը Կոմիտեում մուտքագրվելուց հետո, թերի լինելու դեպքում, 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում դրա մասին էլեկտրոնային կամ կապի այլ միջոցներով տեղեկացվում է Հայտատուին:
8. Հայտատուն հայտը և դրան կից ներկայացվող փաստաթղթերը թերի լինելու կամ կից փաստաթղթերում թերությունների մասին տեղեկացում ստանալու դեպքում մինչև 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում կարող է համալրել դրանք:
9. Հայտը մերժվում է, եթե հայտը և դրան կից ներկայացվող փաստաթղթերը թերի են, և 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում Հայտատուն չի վերացնում

հայտում կամ դրան կից փաստաթղթերում առկա թերությունները կամ չի ներկայացնում համալրված փաստաթղթերը:

10. Հյուրանոցի կամ առողջարանի վերակառուցման ծրագրի վերաբերյալ հայտն ուսումնասիրելիս Կոմիտեն առաջնորդվում է notify.tourism.gov.am հարթակում հյուրանոցը կամ առողջարանը շահագործող անձի կողմից իր գործունեության համար «Գործունեության իրականացման ծանուցման մասին» օրենքով սահմանված կարգով ծանուցված լինելու հանգամանքով:
11. Հյուրանոցի կամ առողջարանի կառուցման ծրագրի վերաբերյալ հայտն ուսումնասիրելիս Զբոսաշրջության կոմիտեն առաջնորդվում է notify.tourism.gov.am հարթակում հյուրանոցը կամ առողջարանը շահագործող անձի կողմից հյուրանոցային ծառայությունների մատուցումից առաջ իր գործունեության համար «Գործունեության իրականացման ծանուցման մասին» օրենքով սահմանված կարգով ծանուցելու հանձնառությամբ:

Ձև

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N ____

_____ ՀՅՈՒՐԱՆՈՑԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏԻ (ՀՅՈՒՐԱՆՈՑԻ ԿԱՄ ԱՌՈՂՋԱՐԱՆԻ) ԿԱՌՈՒՑՄԱՆ ԿԱՄ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ __-Ի N ___-Լ ՀՐԱՄԱՆԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ

«_____»«_____» 20 _____ թ.

_____-ի

Ներդրումային ծրագիրը ներկայացնող կազմակերպության անվանումը

_____ - ի

Հյուրանոցային տնտեսության օբյեկտի կամ ներդրումային ծրագրի անվանումը

կառուցման /վերակառուցման ներդրումային ծրագիրը՝ համապատասխանում է/չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2026 թվականի հունիսի __-ի N ___-Ա հրամանով սահմանված պահանջներին:

ՀՀ ԷՆ զբոսաշրջության
կոմիտեի նախագահ՝

_____

անուն-ազգանուն, ստորագրություն

«_____» «_____» 20_____ թ.